**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի ք.Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի ապրիլի 28-ին կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 պայմանագրում 2020 թվականի հունվարի 31-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | ՀՀ Լոռու մարզի ք.Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 4.1.2 և 7.3 կետեր: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

## 28.04.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի

ք. Երևան «31» հունվարի 2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Արման-Թաման>> ՍՊԸ -ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Մովսիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.12.2019թ. N 1919-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 28.04.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.2 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել 2020թ. ընթացքում Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայությունների վճարման ժամանակացույցը 909 500 (ինը հարյուր ինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե | <<Արման-Թաման>> ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 | ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Գավառ մ/ճ |
| Հ/Հ 900011012599 | Հ/Հ 11500844540100 |
| ՀՎՀՀ 02565827 | ՀՎՀՀ 08417115 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| ---------------- Ա. Մկրտչյան | ---------------- Մ. Մովսիսյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված*
*28.04.2017թ. կնքված ծառայությունների մատուցման*
*N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի*
*հունվարի 2020թ. կնքված N 4 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| ՀՀ Լոռու մարզի ք.Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն | - | - | - | - | - | - | - | - | - | 909 500 | 909 500 | 909 500 | **909 500** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

------------------ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<Արման-Թաման>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Գավառ մ/ճ
Հ/Հ 11500844540100
ՀՎՀՀ 08417115

Տնօրեն՝

------------------ Մ. Մովսիսյան
(ստորագրություն)

Կ.Տ.